USAID
ᲐᲛᲔᲠᲘᲙᲘᲡ ᲮᲐᲚᲮᲘᲡᲒᲐᲜ

NDI

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԱՄԱՐ

www.ndi.org

Ուղեցույցի հեղինակ՝
Նինո Լոլաձե, GIPA Վրաստանի
Հասարակայնության հետ կապերի ինստիտուտի տեղական
Ինքնակառավարման կենտրոնի ղեկավար

Ուղեցույցը պատրաստվել է Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) «Ընտրություններին և քաղաքական գործընթացներին աջակցություն Վրաստանում» ծրագրի շրջանակներում:

Այս հրապարակումը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության USAID-ի միջոցով: Բովանդակության պատասխանատուն հեղինակն է, և արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել Ազգային ժողովրդավարական ինստիտուտի, Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետներին:

NDI-ը շահույթ չհետապնդող, անկուսակցական, ոչ կառավարական կազմակերպություն է, որն աշխատում է ամբողջ աշխարհում գործընկերների հետ՝ ամրապնդելու և պաշտպանելու ժողովրդավարական ինստիտուտները, գործընթացները, նորմերը և արժեքները՝ բոլորի համար կյանքի ավելի լավ որակ ապահովելու համար: NDI-ն աշխարհը տեսնում է որպես մի վայր, որտեղ ժողովրդավարությունն ու ազատությունը հաղթում են, և բոլորի արժանապատվությունը պաշտպանված է: Կազմակերպության մասին հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել կայքում՝ www.ndi.org

Թբիլիսի, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5 ԻՆՉՈՒ՞ ՊԵՏՔ Է ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

7 Ո՞Վ Է ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

8 Ի՞ՆՉ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԸ

11 Ի՞ՆՉ Է ԲՅՈՒՋԵՆ

13 ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

20 ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԿՈՂՄԵՐԸ

21 Ի՞ՆՉ ԴԵՐ ՈՒՆԵՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

22 ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ՝ ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

31 ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ՝ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ և ՀԱՍՏԱՏՈՒՄ

34 ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ՝ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

36 ԲՅՈՒՋԵԻ ՕՐԱՑՈՒՅՑ

ԻՆՉՈՒ՞ ՊԵՏՔ Է ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Տեղական ինքնակառավարումը Վրաստանի քաղաքացիների իրավունքներն ու հնարավորությունն է, տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, Վրաստանի օրենսդրության շրջանակներում, տեղական բնակչության շահերին համապատասխան որոշել տեղական կարևորության հարցեր[1].

Դուք՝ քաղաքացիներդ, իրավունք ունեք.

- Մասնակցել որոշումներ կայացնելու գործընթացին;
- Տեղական ինքնակառավարման մարմինների դիմաց տարբեր ճանապարհով և ձևով ձեզ համար կարևոր խնդիրները բարձրացնել և դրանց լուծում պահանջել;
- Մասնակցել մունիցիպալիտետների առաջնահերթությունների որոշման գործընթացին;
- Տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել տեղեկատվություն և հիմնավորված պատասխան ստանալ;
- Ծանոթանալ քաղաքապետարանի կողմից Սակրեբուլոյում ներկայացված բյուջեի նախագծին[2], հաստատված[3] և հստակ[4] բյուջեներին;
- Մասնակցել բյուջեի նախագծի քննարկմանը Սակրեբուլոյի հանձնաժողովների նիստերին;
- Վերահսկել տեղական բյուջեի ծախսերը և պահանջել անհրաժեշտ փաստաթղթերը քաղաքապետարանի համապատասխան ծառայություններից;
- Ծանոթանալ բյուջեի կատարման եռամսյակային և տարեկան հաշվետվություններին:

---

1 Վրաստանի օրգանական օրենք „Տեղական ինքնակառավարման օրենսգիրք“ 2014 թ., 2 հոդված, 1 կետ.

2 **Բյուջեի նախագիծ** - Քաղաքապետի կողմից պատրաստված բյուջեի փաստաթուղթ, որը Սակրեբուլոյում ներկայացված է նախագծի տեսքով և դեռ հաստատված չէ;

3 **Հաստատված բյուջե** – Համապատասխան իշխանության ներկայացուցչական մարմնի կողմից հաստատված պետական, Ինքնավար Հանրապետության հանրապետական կամ տեղական ինքնակառավարման միավորի բյուջե;

4 **Հստակ բյուջե** – Պետական, Ինքնավար Հանրապետության հանրապետական կամ տեղական ինքնակառավարման միավորի ճշգրտված բյուջե;

Ուստի յուրաքանչյուր քաղաքացու իրավունքն է, ներգրավվել քաղաքապետարանի կառավարման գործընթացին, թեև, հիմնական մարտահրավերն այն է, թե որքանով է քաղաքացին օգտագործում այդ իրավունքը, ինչպես է նպաստում սեփական բնակավայրի զարգացմանը, մասնակցում է Մունիցիպալիտետի համար կարևոր խնդիրների լուծման գործընթացին և պատասխանատվությունը կիսում է թե ոչ տեղական իշխանությունների հետ:

Որպեսզի դուք՝ քաղաքացիներդ ակտիվորեն ներգրավվեք որոշումների կայացման գործընթացում և տեղական իշխանությունների հետ միասին պլանավորեք, թե ինչ խնդիրների լուծման համար պետք է ծախսվի ձեր հարկային բյուջեն, առաջին հերթին պետք է լավ տեղեկացված լինել և իմանալ.

- Ի՞նչ լիազորություններ ունի տեղական ինքնակառավարումը, և ի՞նչ հարցեր կարելի է լուծել քաղաքապետարանի ֆինանսներով:
- Ինչպիսի՞ն է բյուջետային գործընթացը:
- Ի՞նչ լիազորություն ունեն տեղական ինքնակարավարման մարմինները բյուջետային գործընթացին:
- Ի՞նչ դեր ունեն քաղաքացիները տեղական բյուջեի ձևավորման և տնօրինման գործընթացում:
- Ի՞նչ դրական արդյունք ունի կառավարության և քաղաքացիների համագործակցությունը:
- Ի՞նչ է տեղական բյուջեն: Ի՞նչ աղբյուրներից է բյուջեն լրացվում և ինչպե՞ս է այն ծախսվում:

Այս խնդիրների իմացությունը կբարձրացնի բյուջետավորման գործընթացում ավելի ակտիվ ներգրավվելու ձեր մոտիվացիան:

Ո՞Վ Է ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

Վրաստանի Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի քաղաքացիները տեղական նշանակության հարցերը կազմակերպում են տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմինների միջոցով[5].

Սակրեբուլո - Ներկայացուցչական մարմին, որը հաշվետու է բնակչությանը;

Սակրեբուլոն կոլեգիալ մարմին է, որտեղ ձայների մեծամասնությամբ ընդունվում են որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է մունիցիպալիտետի տարածքում.

Քաղաքապետ - Գործադիր մարմինը և քաղաքապետարանի բարձրագույն պաշտոնատար անձը, որը պատասխանատու է բնակչությանը և Սակրեբուլոյին;

Մունիցիպալիտետի քաղաքապետարանը մունիցիպալիտետի գործադիր մարմնին ենթակա հիմնարկ է, որն ապահովում է քաղաքապետի լիազորությունների իրականացնումը:

Մունիցիպալիտետի գործադիր իշխանությունն ապահովում է Սակրեբուլոյի որոշումների կատարումը, տարբեր ծրագրերի իրականացումը և բնակչությանը ծառայությունների մատուցումը: Մյուս կողմից, Սակրեբուլոյի լիազորությունն է կարգավորել և վերահսկել գործադիր մարմինների գործունեությունը: Սակրեբուլոն վերահսկում է իր ընդունած որոշումների կատարումը, լսում և գնահատում է պաշտոնատար անձանց գործունեության հաշվետվությունները:

5 Վրաստանի Սահմանադրություն 1995 թ., 74 հոդված, 1 կետ.

Ի՞ՆՉ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԸ

Տեղական ինքնանակառավարման օրենսգիրքը սահմանում է Մունիցիպալիտետի լիազորությունների տեսակները՝ սեփական[6] և պատվիրակված[7]: Պետական կառավարման և ինքնակառավարման միավորների լիազորությունները տարանջատված են միմյանցից:

Որպեսզի քաղաքացին դիմի Տեղական ինքնակառավարման մարմիններին բյուջեից ինչ որ բան անելու համար, կարևոր է, լավ իմանալ, թե ինչ իրավունք ունի Ինքնակառավարումը և ինչ կարող է անել:

ՏԵՂՅԱ՞Կ ԵՔ, ԹԵ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ԾԱԽՍՎԵԼ

ՏԵՂԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ և ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ .

- Տեղական նշանակության ճանապարհների տեխնիկական սպասարկում և վերականգնում;
- Գյուղերի ջրամատակարարում (քաղաքների ջրամատակարարումն ապահովում է Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության միացյալ ջրամատակարարման ընկերությունը);
- Տեղական նշանակության մելիորացիոն համակարգի զարգացում;
- Բնակչության համար քաղաքային տրանսպորտի ծառայության կազմակերպում;
- Արտաքին լուսավորություն - տեղական նշանակության բնակավայրերի և ճանապարհների լուսավորություն;
- Հասարակական տարածքների բարեկարգում՝ հրապարակներ, այգիներ;
- Բնակարանների սեփականատերերի ընկերակցության խթանում;
- Գերեզմանոցների սարքավորում և տեխնիկական սպասարկում;
- Տեղական նշանակության օբյեկտների հարմարեցում:

6 **Սեփական (բացառիկ) լիազորություն** - Ինքնավար միավորի լիազորություն, որն այն իրականացնում է Վրաստանի օրենսդրության համապատասխան՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ;

7 **Պատվիրակված լիազորություն** - Պետության կամ Ինքնավար Հանրապետության կառավարման մարմնի իրավասությունը, որը փոխանցվել է մունիցիպալիտետին օրենքի հիման վրա կամ Վրաստանի օրենսդրության համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա՝ պատշաճ նյութական և ֆինանսական աջակցությամբ:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

- Մանկապարտեզների կառավարում;
- Մանկապարտեզների շենքերի վերանորոգում և նորերի կառուցում:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.

- Մունիցիպալ թափոնների կառավարում;
- Փողոցների և հասարակական օբյեկտների մաքրում;
- Տարածքների կանաչապատում;
- Անօթևան կենդանիների հետ կապված հարցերի որոշում՝ պոպուլյացիայի կառավարում:

ՍՊՈՐՏ և ՄՇԱԿՈՒՅԹ.

- Սպորտային և մշակութային արտադպրոցական հաստատությունների խթանում;
- Տեղական ինքնության, ստեղծագործական գործունեության և մշակութային ժառանգության պաշտպանություն և զարգացում;
- Մունիցիպալիտետում մշակույթի ոլորտի զարգացման խթանում;
- Գրադարանների, կինոթատրոնների, թանգարանների, թատրոնների, ցուցասրահների և մշակութային օբյեկտների գործունեության ապահովում և նոր օբյեկտների կառուցում;
- Մարզական և առողջապահական հաստատությունների գործունեության ապահովում և նոր օբյեկտների կառուցում;
- Տեղական նշանակության մշակութային հուշարձանների պահպանում, վերակառուցում և վերականգնում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ.

- Անօթևանների կացարանով ապահովում և հաշվառում;
- Տեղական նշանակության օբյեկտների, հանրային հավաքատեղերի և քաղաքային տրանսպորտի պատշաճ հարմարեցում և սարքավորում;
- Հանրային տարածքում երեխային պաշտպանելու, հանրային միջոցառմանը մասնակցելու նպատակով կանխարգելիչ և համապատասխան արձագանքման միջոցառումների իրականացում:

ԲԱՑԻ ԱՅԴ, ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԸ ԻՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ՄՏՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ և ՉԵՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ: ՀԵՏԵՎՅԱԼՆ Է.

- Զբոսաշրջության զարգացում;
- Սոցիալական օգնություն և առողջապահություն;
- Տեղական մակարդակում երիտասարդական քաղաքականության զարգացման խթանում;
- Երեխաների պաշտպանություն և աջակցություն;
- Զանգվածային սպորտի խթանում;
- Հասարակական կրթության և գենդերային հավասարության խթանում;
- Կանանց նկատմամբ բռնության և/կամ ընտանեկան բռնության կանխարգելում, կանանց նկատմամբ բռնության և/կամ ընտանեկան բռնության զոհերի պաշտպանություն և աջակցություն;
- Առողջ ապրելակերպի հաստատում;
- Մարդու առողջության համար անվտանգ միջավայրի ստեղծում;
- Նորարարական զարգացման աջակցություն և այլն:

Ի՞ՆՉ Է ԲՅՈՒՋԵՆ

Մունիցիպալիտետների լիազորությունների իրականացման հիմնական գործիքը տեղական բյուջեն է:

- Յուրաքանչյուր մունիցիպալիտետ ունի իր անկախ բյուջեն;
- Մունիցիպալիտետի բյուջեն անկախ է այլ մունիցիպալիտետների և Վրաստանի Ինքնավար Հանրապետության հանրապետական և պետական բյուջեներից:

Բյուջեն անհատի, ընտանիքի, ձեռնարկության, կազմակերպության, պետության, մունիցիպալիտետի եկամուտների և ծախսերի միասնական ցուցակն է որոշակի ժամանակահատվածում, սովորաբար մեկ տարվա ընթացքում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Յուրաքանչյուր տեղական Ինքնավար միավոր ունի իր անկախ բյուջեն, որի մշակման և տնօրինման համար պատասխանատու է իշխանությունը:

Մունիցիպալիտետի հիմնական ֆինանսական փաստաթղթերն են.

- Միջնաժամկետ առաջնահերթությունների փաստաթուղթ;
- Մունիցիպալիտետի բյուջեն (հավելվածներով՝ ծրագրային բյուջեի հավելված, կապիտալ բյուջեի հավելված և Ո(Ո)ԻԱ[8]-ների հավելվածներ):

Տեղական ինքնակառավարման միավորի առաջնահերթությունների փաստաթուղթը վարչական միավորների զարգացման հիմնական պլանն է, որն արտացոլում է տեղեկատվություն միջնաժամկետ գործողությունների ծրագրերի մասին; փաստաթուղթը պետք է ներառի տեղեկատվություն անցած ժամանակահատվածի, ինչպես նաև առաջիկա 4 տարիներին մունիցիպալիտետի բյուջեից ֆինանսավորվելիք հիմնական առաջնահերթությունների և ծրագրերի մասին:

Առաջնահերթությունների փաստաթուղթը ներառում է տեղեկատվություն անցյալ ժամանակաշրջանի ***(ընթացիկ և անցած տարիները, օրինակ՝ 2023-2026 թվականների առաջնահերթությունների փաստաթուղթը պարունակում է տեղեկատվություն 2021 և 2022 թվականների մասին):***

8 **Ո(Ո)ԻԱ** - ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձ

Ինչպես նաև հաջորդ 4 տարիների ընթացքում ***(պլանավորման 2023 թվականը և պլանավորումից երեք տարի հետո՝ 2024, 2025 և 2026 թթ.)*** մունիցիպալիտետի բյուջեից ֆինանսավորվելիք հիմնական առաջնահերթությունների և ծրագրերի մասին:

Վրաստանի բյուջետային օրենսգրքի համաձայն (2009 թ.), **բյուջեն** Վրաստանի տեղական իշխանությունների գործառույթներն ու պարտականությունները կատարելու համար ստացվելիք բյուջեի մուտքի (տարբեր աղբյուրներից ստացված դրամական միջոցների միավորում), կատարվելիք վճարումների *(թողարկվելիք դրամական միջոցների միավորում)* և մնացորդի փոփոխության (նախորդ տարվա մնացած գումարը, որը չի ծախսվել և այն օգտագործվելու կամ կուտակվելու է) միավորում է, որը հաստատված է տեղական իշխանությունների համապատասխան մամինների կողմից:

Մունիցիպալիտետի բյուջեում ներկայացված են անցած, ընթացիկ և նախատեսվող բյուջետային տարվա ֆինանսական տվյալները: Օրինակ՝ 2023 թվականի բյուջեի նախագծում տեղեկատվություն կա 2023 թվականի համար նախատեսված ֆինանսական ցուցանիշների և անցած 2021 և 2022 թվականների մասին:

Բոլոր մունիցիալիտետների բյուջեն ունի ընդհանուր կառուցվածք և բաղկացած է մի քանի գլուխներից:

- **Առաջին գլխում,** որը միավորում է մի քանի հոդվածներ, տեղեկատվություն է տրամադրում բյուջեի հիմնական ֆինանսական կարգավորումների մասին՝ բյուջեի հաշվեկշիռ, բյուջեի մուտք, վճարումներ և մնացորդի փոփոխություն. Եկամուտներ (հարկեր, դրամաշնորհներ, այլ եկամուտներ), ծախսեր և այլն:

- **Բյուջեի երկրորդ գլխում** տրված է ծրագրերի և ենթածրագրերի նկարագրությունը և նպատակները: Բացի այդ, բյուջեն ուղեկցում է ծրագրային հավելվածը, որտեղ լրացուցիչ տրամադրված է ծրագրի/ենթածրագրի ակնկալվող վերջնական/միջանկյալ արդյունքները և արդյունքների գնահատման ցուցանիշները (բազային և նպատակային ցուցանիշներ), սխալի հավանականությունը և հնարավոր ռիսկերը;

- **Բյուջեի երրորդ գլխում** ներկայացված են առաջնահերթությունների, ծրագրերի և ենթածրագրերի **հատկացումների մասին** տեղեկատվություն (հատկացում նշանակում է բյուջեից հատկացված գումարի վճարում իրականացնելու լիազորություն): Այս տեղեկատվությունը տրամադրված է անցյալ, ընթացիկ և ապագա տարիների համար:

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Տարվա ընթացքում մունիցիպալիտետի բյուջե մուտքագրված ամբողջ գումարը ***բյուջեի մուտք է:***

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ

մունիցիպալիտետի բյուջեի մուտքը լցվում է 4 հիմնական աղբյուրներից:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Մունիցիպալիտետի դեպքում եկամուտները հարկերն են, դրամաշնորհները և այլ եկամուտները: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են մունիցիպալիտետի եկամուտների տարբեր աղբյուրներ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ
ՀԱՐԿԵՐ՝ գույքահարկ, մասնաբաժին ԱԱՀ-ից
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ՝ նպատակային, կապիտալ և հատուկ փոխանցումներ
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ վարձակալություն, տոկոսներ, տարբեր վճարներ, տուգանքներ և հավելավճարներ

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆՎԱԶՈՒՄ

«Ոչ ֆինանսական ակտիվների նվազում» տերմինը վերաբերում է գույքի վաճառքից ստացված հասույթին:

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ՝ շենքեր, մեքենաներ, մշակովի բույսեր և կենդանիներ
ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ՝ հող և օգտակար հանածոներ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆՎԱՋՈՒՄ

Ֆինանսական ակտիվների անկումը նշանակում է, որ մունիցիպալիտետը խնայողություններ է ունեցել և այժմ նախատեսում է օգտագործել այդ գումարը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ
ԱՎԱՆԴՆԵՐ - մունիցիպալիտետի հաշվին առկա ազատ գումարի օգտագործում;
ՎԱՐԿ ՏՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ - մունիցիպալիտետը կարող է վարկ տրամադրել;
ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՒ ԱՅԼ ԿԱՊԻՏԱԼՆԵՐ:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃ

Մունիցիպալիտետն իրավունք ունի Վրաստանի կառավարության թույլտվությամբ կապիտալ ներդրումների իրականացման համար վարկ վերցնել, որի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի վերջին 3 ֆինանսական տարվա մունիցիպալիտետի սեփական եկամուտների միջին տարեկան գումարի 10%-ը: Մունիցիպալիտետը նշված ծավալից ավելի պարտք կարող է վերցնել միայն պետական կառավարման մարմնից և նրա կողմից վերահսկվող հանրային իրավունքի իրավաբանական անձից:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հավանաբար, հետաքրքիր է նաև, թե ինչպես ենք մենք՝ քաղաքացիներս, մասնակցում մունիցիպալիտետի բյուջեն լցնելուն:

Երեւի չի գտնվի մարդ, որ գոնե մեկ անգամ չի ասել՝ պետության/մունիցիպալիտետի բյուջեն իմ վճարած հարկերով է լցվում, ու սա մեր փողն է:

Սակայն հաճախ թյուր կարծիքներ են հնչում մունիցիպալիտետի բյուջեի հետ կապված: Քաղաքացիները, չգիտես ինչու, կարծում են, որ պետությունը փող է տալիս մունիցիպալիտետին, և իրենք չեն մասնակցում այս գործընթացին: Ինչպես արդեն նշվեց վերևում, մունիցիպալիտետի բյուջեն անկախ է և ունի ինչպես սեփական, այնպես էլ ոչ սեփական բյուջեի մուտք:

ՄԱՍՆԱԿՑՈՒ՞Մ ԵՔ, ԹԵ ՈՉ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԼՐԱՑՄԱՆԸ:

Քաղաքացիներն ուղղակի և անուղղակի մասնակցում են մունիցիպալիտետի բյուջեի լրացմանը:

***Նշում.** Քաղաքացիների մի մասը կարծում են, որ էլեկտրաէներգիայի կամ բնական գազի սպառման համար վճարվող գումարը ներառված է պետության կամ մունիցիպալիտետի բյուջեում, այս կարծիքը սխալ է, քանի որ այդ գումարը գնում է ծառայություն մատուցող ընկերության բյուջե:*

Եկեք մանրամասն քննարկենք մեր կողմից մունիցիպալիտետի բյուջե վճարվող ուղղակի և անուղղակի հարկերը:

Ինչպես արդեն գիտենք, մունիցիպալիտետի բյուջեի մուտքի 4 աղբյուրներից մեկը եկամուտներն է: Իր հերթին այդ եկամուտները ներառում են հարկերը, դրամաշնորհները և այլ եկամուտները:

Այսպիսով, եկեք հետևենք հաջորդականությանը.

ՀԱՐԿԵՐ - Տեղական բյուջեն ներառում է գույքահարկը, ինչպես նաև՝ ԱԱՀ-ի մասնաբաժինը:

Գույքահարկը ուղղակի հարկ է, որը քաղաքացիները (ֆիզիկական անձինք) և ձեռնարկությունները/կազմակերպությունները վճարում են բյուջեում:

Ո՞վ է վճարում գույքահարկ.

- Ֆիզիկական անձը, այն դեպքում, եթե նա Վրաստանի տարածքում հարկվող գույքի (տուն, ավտոմեքենա) սեփականատեր է, և այդ անձի ընտանիքի նախորդ տարվա եկամուտը գերազանցում է 40000 լարին;

- Ֆիզիկական անձը, եթե նա Վրաստանի տարածքում ունի գյուղատնտեսական կամ ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածք, որն ազատված չէ գույքահարկի վճարումից;

» Ձեռնարկություն/կազմակերպությունը իր հաշվեկշռում որպես հիմնական միջոցներ գրանցված ակտիվների, չտեղակայված սարքավորումների, անավարտ շինարարության համար:

Գույքահարկից եկամուտը ներառվում է այն մունիցիպալիտետի բյուջեում, որտեղ գտնվում է նշված գույքը, իսկ տրանսպորտային միջոցի դեպքում, որտեղ այն գրանցված է:

ԱԱՀ-ից եկամուտները նույնպես ներառված են մունիցիպալիտետի բյուջեում: Մենք՝ քաղաքացիներս, գնված ապրանքների և ծառայությունների համար վճարում ենք 18% ԱԱՀ: Սա մեր կողմից վճարվող անուղղակի հարկ է: Ամբողջ Վրաստանի մասշտաբով ստացված ԱԱՀ-ի 81%-ը գնում է պետբյուջե, իսկ 19%-ը բաշխվում է 64 մունիցիպալիտետների միջև: Դրանցից ձեր մունիցիպալիտետը ևս ստանում է այս գումարը:

ԱՅՍՊԻՍՈՎ, ԴՈՒՔ ԳՈՒՄԱՐ ԵՔ ԲԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏԵՍՔՈՎ և ՆԱև ԱՆՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ՝ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՊՐԱՆՔ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԳՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱԱՀ-Ի ՏԵՍՔՈՎ:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԸ եկամուտներիի աղբյուրներից մեկն է: Պետությունը մունիցիպալիտետին տրամադրում է երեք տեսակի փոխանցում՝ **կապիտալ փոխանցում՝** մունիցիպալիտետում ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար, **հատուկ փոխանցում՝** բնական իրադարձությունների, էկոլոգիական և այլ աղետների, ռազմական գործողությունների, համաճարակների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքների (վնասների) վերացման համար և **նպատակային փոխանցում՝** պատվիրակված լիազորությունների իրականացման համար, ինչպիսիք են զորակոչը, հանրային առողջությունը և այլն:

***Նշում.** Կարելի է ասել, որ քաղաքացին անուղղակիորեն մասնակցում է պետության կողմից փոխանցումների տեղափոխմանը. չէ՞ որ պետական բյուջեն լցվում է մեր վճարած հարկերով (հարկային, ԱԱՀ, ակցիզ, ներմուծում, շահույթ):*

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ - այս կատեգորիայի եկամուտները կրկին բյուջե են մտնում քաղաքացիների վճարած գումարից:

Դուք վճարում եք.

- Վարձավճարի գումարը, եթե գույքը վարձակալել եք մունիցիպակիտետից;
- Տուրքի չափը՝ շինարարության թույլտվության համար: մաքրման ծառայություններ ստանալու համար; պարտադիր զինվորական զորակոչը հետաձգելու համար; եթե դուք խաղային բիզնես ունեք, խաղային բիզնեսի տուրքավճար;
- Տուգանքների և տույժերի չափը՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար (վճարված տուգանքի 60 տոկոսը գնում է մունիցիպալիտետի բյուջե), մունիցիպալիտետի կողմից տրված տուգանք և այլն:

ԱՅՍՊԻՍՈՎ, ԴՈՒՔ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՔ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԼՐԱՑՄԱՆԸ, ՈՒՍՏԻ ՆԵՐԳՐԱՎՎԵՔ ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆԸ, ՈՐԸ ԼՐԱՑՎՈՒՄ Է ՁԵՐ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻՑ և ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ, և ԻՆՔՆԵՐԴ ՈՐՈՇԵՔ, ԹԵ ԻՆՉԻ ՎՐԱ ՊԵՏՔ Է ԾԱԽՍԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՓՈՂԵՐԸ:

ՀԱՐԿԵՐ

Տեղական բյուջեից տրամադրվող գումարային միջոցների միավորումը ներկայացնում է **բյուջետային վճարումները:**

Գոյություն ունի մունիցիպալիտետի վճարումների 4 աղբյուր.

ԾԱԽՍԵՐ

- Աշխատանքի վարձատրություն (Մունիցիպալիտետի աշխատակիցների աշխատավարձ)
- Ապրանքներ և ծառայություններ (գրասենյակային նյութերի և գույքագրման գնում և այլն);
- Տոկոս (բանկից վերցված վարկի տոկոս)
- Սուբսիդիա (մունիցիպալիտետի կողմից հիմնված Ո(Ո)ԻԱ-ների ֆինանսավորում)
- Դրամաշնորհ (պետական իշխանության կողմից հիմնված Ո(Ո)ԻԱ-ների համաֆինանսավորում)
- Սոցիալական ապահովություն
- Այլ ծախսեր

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՃ

Ոչ ֆինանսական ակտիվների աճը գույքի գնումն է, վերականգնումը; Կապիտալ նախագծերի իրականացում, երբ մունիցիպալիտետն իրականացնում է ցանկացած տեսակի ենթակառուցվածքային նախագիծ:

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՃ

- Ենթակառուցվածքային նախագծերի իրականացում
- Մեքենա-հաստոցների գնում
- 500 լարիից ավել արժողության տեխնիկայի գնում

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՃ

Երբ մունիցիպալիտետը վարկ է տալիս, ՍՊԸ-ի է ֆինանսավորում կամ ավանդ է դնում գումարը, այս գործողությունների արդյունքում ավելանում են մունիցիպալիտետի ֆինանսական ակտիվները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՃ

- Առևտրային բանկի հաշվին ազատ գումար մուտքագրել
- Վարկ տալ
- Մունիցիպալիտետի կողմից հիմնված ՍՊԸ-ի ֆինանսավորում

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶՈՒՄ

- Մունիցիպալիտետի կողմից վերցրած պարտքի մայր գումարի մարում:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶՈՒՄ

- Ներքին կամ արտաքին պարտքի մայր գումարի վճարում:

Ո՞Ր ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆ Է ԸՆԴԳՐԿՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ, և ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ:

- Հաշվի առնելով բնակչության կարիքները՝ տեղական ինքնակառավարումը ինքնուրույն որոշումներ է կայացնում սեփական ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ;

- Վրաստանի Կենտրոնական և Ինքնավար Հանրապետությունների իշխանություններն իրավունք չունեն միջամտելու տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային լիազորություններին:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

- Տեղական ինքնակառավարման բյուջետային գործընթացը տևում է երկու տարի և երկու ամիս;
- Բյուջեի աշխատանքները սկսվում են բյուջետային տարվա սկզբից 10 ամիս առաջ՝ մարտի 1-ին;
- Բյուջետային գործընթացն ավարտվում է (ոչ ուշ, քան) հաջորդ տարվա մայիսի 1-ին՝ բյուջեի կատարման հաշվետվության հաստատմամբ;
- Բյուջետավորումը ներառում է երեք հիմնական փուլ.

Բյուջետային ցիկլում տեղական բյուջեի համար պատասխանատվությունը բաշխված է ինքնակառավարման գործադիր (քաղաքապետ/քաղաքապետարան) և ներկայացուցչական (սակրեբուլո) մարմիններին:

ՔԱՂԱՔԱՊԵՏ/ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ	ՍԱԿՐԵԲՈՒԼՈ
Բյուջեի նախագծի պատրաստում	Բյուջեի նախագծի վերանայում
Բյուջեի նախագծի ներկայացում Սակրեբուլոյում	Բյուջեի հաստատում
Հաստատված բյուջեում փոփոխությունների պատրաստում և ներկայացում Սակրեբուլոյում	Բյուջեի փոփոխությունների հաստատում
Բյուջեի կատարում	Բյուջեի կատարման հսկում
Բյուջեի կատարման հաշվետվության ներկայացում Սակրեբուլոյում	Բյուջեի կատարման հաշվետվության հաստատում

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԿՈՂՄԵՐԸ

Մունիցիպալիտետի ֆինանսական փաստաթղթերը պետք է կազմվեն կողմերի ներգրավմամբ: Տեղական իշխանությունը բյուջեն պետք է պլանավորի և բաշխի՝ հաշվի առնելով բնակչության կարիքները, ակնհայտորեն, օրենքով ինքնակառավարմանը տրված լիազորությունների սահմաններում: Այնուամենայնիվ, պլանավորման գործընթացը պետք է լինի ներառական, և տեղական իշխանությունները պետք է ապահովեն համայնքային բոլոր խմբերի ներգրավվածությունը:

Մունիցիպալիտետի կառավարման մարմինների հետ բյուջետավորման գործընթացում պետք է ներգրավվեն շահագրգիռ կողմերը.

- Քաղաքացին;
- Մունիցիպալիտետում գործող խորհուրդները՝ Քաղաքապետի քաղաքացիական խորհրդատվական խորհուրդը; երիտասարդական խորհրդատվական խորհուրդը; մունիցիպալիտետի գենդերային խորհուրդը; հաշմանդամություն ունեցող անձանց խորհուրդը և այլն;

- Տեղական ոչ կառավարական կազմակերպությունները; համայնքային կապերը; նախաձեռնող խմբերը; տեղական զարգացման խմբերը (LAG);
- Խոցելի խմբերի ներկայացուցիչները՝ հաշմանդամներ, կանայք, երիտասարդներ, բնակչության այլ քիչ ներկայացված խմբերի ներկայացուցիչները;
- Տեղական բիզնեսի ներկայացուցիչները; կին ձեռներեցները; ֆերմերները; կոպերատիվների ներկայացուցիչները;
- Ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները և այլն;

Բյուջեի մշակման մեջ ներգրավվածությունը նպաստում է թափանցիկությանն ու պատասխանատվության բաշխմանը:

Բյուջետային գործընթացում ակտիվ ներգրավված յուրաքանչյուր քաղաքացի կամ շահագրգիռ խումբ կարող է ազդել որոշման վրա և դառնալ փոփոխությունների նախաձեռնողը:

Ի՞ՆՉ ԴԵՐ ՈՒՆԵՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ինչու՞ պետք է ներգրավվել բյուջետավորման գործընթացում: Որպեսզի

- ազդեք որոշումների կայացման գործընթացի վրա;
- տեղական ինքնակառավարման օրակարգում սահմանեք ձեր կարիքները;
- նպաստեք պետական ֆինանսների թափանցիկությանը և արդյունավետ ծախսմանը:

Հիշե՛ք՝ տեղական բյուջեն ծախսվում է, որպեսզի բնակչությունը ստանա որակյալ ծառայություններ և ապրի ավելի լավ միջավայրում:

Ինչպես արդեն նշվեց վերևում, քաղաքացիները և տարբեր շահագրգիռ կողմեր ունեն իրենց դերն ու տեղը բյուջետային ցիկլում:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ՝ **ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

ՍԱ ԿԱՐԵՎՈՐ Է.

- Բյուջեի նախագծի պատրաստման և ներկայացման գործընթացը համակարգում է մունիցիպալիտետի ֆինանսական ծառայությունը;
- Բյուջեի պատրաստումը սկսվում է բյուջետային տարվա սկզբից 10 ամիս առաջ՝ մարտի 1-ից;
- Քաղաքապետի հրամանով ստեղծված աշխատանքային խումբն աշխատում է առաջնահերթությունների փաստաթղթի վրա, որում ընդգրկված են՝ քաղաքապետը, փոխքաղաքապետը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, մունիցիպալիտետի կողմից ստեղծված իրավաբանական անձանց ներկայացուցիչները, հրավիրված փորձագետ և այլ շահագրգիռ անձինք;
- Առաջնահերթությունների փաստաթղթի պատրաստման գործընթացում կարևոր է ուսումնասիրել քաղաքացիների կարիքները;
- Առաջնահերթությունների փաստաթղթի առաջին տարբերակը աշխատանքային խումբը քաղաքապետին է ներկայացնում մինչև օգոստոսի 15-ը;
- Բյուջեի նախագծի նախնական տարբերակը պետք է պատրաստ լինի նոյեմբերի 15-ից ոչ ուշ:

Վրաստանի օրենսդրության համաձայն՝ մունիցիպալիտետի մարմինները և նրա պաշտոնատար անձինք պարտավոր են ստեղծել կազմակերպչական և նյութատեխնիկական պայմաններ՝ քաղաքացիների մասնակցության և որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար:

Բյուջետային օրենսգրքի համաձայն՝ բյուջետային համակարգի հիմնարար սկզբունքներից է **թափանցիկությունը: Դրա համար պետք է ապահովել.**

- Բյուջետային նախագծերի վերանայման ընթացակարգերի հրապարակայնությունը ներկայացուցչական մարմիններում հանրության և զանգվածային լրատվության միջոցների համար;
- Հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունների հրապարակում;

» Բյուջետային տեղեկատվության հասանելիություն (բացառությամբ գաղտնի տեղեկատվության) ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձի համար:

Մունիցիպալիտետի համապատասխան գերատեսչությունը պետք է ապահովի հետևյալ տեղեկատվության ակտիվ հրապարակումը.

» Մունիցիպալիտետի բյուջեի նախագիծը;

» Մունիցիպալիտետի հաշվետու տարվա բյուջեի կատարման հաշվետվությունը՝ Սակրեբուլոյին ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում;

» Սակրեբուլոն նաև իրավասու է համապատասխան որոշմամբ ընդլայնել պարտադիր և/կամ ակտիվորեն հրապարակվող տեղեկատվության ցանկը:[9]

Տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության օրենքով սահմանված ձևերն են.

» Բնակչության ընդհանուր ժողով;

» Խնդրագիր;[10]

» Քաղաքացիական խորհրդատվական խորհուրդ;

» Մունիցիպալիտետի Սակրեբուլոյի և Սակրեբուլոյի հանձնաժողովի նիստերի մասնակցություն;

» Մունիցիպալիտետի քաղաքապետի և Սակրեբուլոյի անդամի կատարած աշխատանքների հաշվետվությունների քննարկում:

Բացի օրենքով սահմանված ձևերից, քաղաքացիների ներգրավվածությունը կարող է ապահովվել տարբեր ձևերով և մեթոդներով, ինչպիսիք են.

» Հանրային և անհատական հանդիպումներ բնակեցված վայրերում;

» Քաղաքացիների գրավոր նախաձեռնություններ;

» Քաղաքացիների առաջարկություններ և խորհուրդներ;

» Հասարակական կարծիքի հարցումներ;

» Հանրային քննարկումներ;

9 Լավ գործունեության օրինակ է այն, երբ մունիցիպալիտետի համապատասխան մարմիններն ապահովում են բյուջետավորման հետ կապված փաստաթղթերի և որոշումների ակտիվ հրապարակումը: **Մունիցիպալիտետների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը** գնահատվում է Տեղական ինքնակառավարման ինդեքսով: http://www.lsgindex.org/ - Ձեր մունիցիպալիտետի վարկանիշը կարող եք ստուգել այս հղումով:

10 Էլեկտրոնային խնդրագրերի հարթակներն են change.org և manifest.ge;

- Տեղեկատվական արշավներ;
- Հհաղորդակցություն էլեկտրոնային ռեսուրսներով՝ կայք, սոցիալական ցանց;
- Հանդիպումներ և քննարկումներ փորձագետների հետ;
- Տարբեր հասարակական հանձնաժողովներ, խորհրդատվական խորհուրդներ;
- Համաժողովներ, ֆորումներ, սեմինարներ;
- Մասնակցային բյուջետավորում և այլն:

ԴՈՒՔ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻ՝ Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՆԵԼ ԲՅՈՒՋԵԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.

Ծանոթացե՛ք անհրաժեշտ փաստաթղթերին և տեղեկատվությանը.

- Քաղաքապետարանի կայքը և այնտեղ հրապարակված բյուջեի վերաբերյալ փաստաթղթերը;
- Ձեր մունիցիպալիտետի կայքում կարող է լինել դաշտ հաջորդ տարվա առաջնահերթությունների որոշմանը քաղաքացիների մասնակցության մասին, անպայման անցեք այդ հղումով և մասնակցեք առաջնահերթությունների որոշմանը;
- Մունիցիպալիտետի պաշտոնական կայքում կամ սոցիալական հարթակում ծանոթացեք, թե բյուջեի նախագծի վրա աշխատելու ընթացքում նախատեսվում են հանրային հանդիպումներ քաղաքացիների հետ և նշեք ամսաթիվը;
- Եթե նշված տեղեկատվությունը հրապարակված չէ, դիմեք քաղաքապետարան՝ ձեզ տեղեկատվություն տրամադրելու բյուջետավորման գործընթացում նախատեսված ներգրավման մեխանիզմների և նախատեսվող գործողությունների մասին և, միևնույն ժամանակ, ձեզ ներգրավելու այս գործընթացում;
- Խնդրեք ձեր վարչական ստորաբաժանման քաղաքապետի ներկայացուցչին ձեզ տեղեկություն տրամադրել հանրային հանդիպումների և պլանավորված այլ միջոցառումների մասին;

Գրավոր հաղորդակցություն ունեցեք իշխանությունների հետ.

- Էլեկտրոնային փոստով նամակ ուղարկեք քաղաքապետարան, որտեղ որոշումներ կայացնողներին տեղեկատվություն կտրամադրեք հաջորդ տարվա բյուջեում դիտարկվելիք կարիքների մասին;
- Գրեք անհատական կամ կոլեկտիվ նամակ ձեր բնակավայրի կարիքների մասին, այն անձամբ հանձնել քաղաքապետարանի գրասենյակ: Եթե չեք կարողանում գնալ քաղաքապետարանի վարչական կենտրոն, ապա նամակը տվեք քաղաքապետի ներկայացուցչին, որպեսզի նա նամակը հանձնի համապատասխան գերատեսչությանը;
- Անպայման հարցրեք ձեր հանձնած նամակի համարը, որպեսզի հետո հեշտությամբ կարողանաք կարդալ այն և տեղեկություններ ստանալ քաղաքապետարանի համապատասխան ծառայություններից;
- Պատրաստեք խնդրագիր համախոհների հետ կամ ստորագրել արդեն պատրաստված խնդրագիրը;
- Ձեր կարիքները գրավոր ուղղեք Սակրեբուլոյի նախագահին, խմբակցություններին, Սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորին:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՑԵՔ, ՈՐ ՆԱՄԱԿԸ, ՈՐԸ ԴՈՒՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՔ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻՆ, ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

- Խնդրի էությունը;
- Խնդրի հետևանքները;
- Խնդրի հիմնավորումը (կարող եք կցել նկար կամ այլ փաստաթուղթ);
- Մասշտաբ՝ ընդգրկում է մեկ թաղամաս, գյուղ, համայնք թե ամբողջ մունիցիպալիտետը;
- Շահառուների թիվը՝ սեռը և տարիքը ներառյալ;
- Խնդիրը լուծելու ուղիները;
- Ենթադրելի բյուջեն:

Մասնակցություն ունեցե՛ք.

- Հանրային քննարկումներում;
- Քաղաքապետարանի կամ Սակրեբուլոյի կողմից կազմակերպված հետազոտություններում՝ ֆոկուս խմբերում, քանակական հարցումներում, էլեկտրոնային հարցումներում;
- Կարգավորման ընդհանուր ժողովի կազմակերպմանը (պլանավորել այն համախոհների հետ կամ մասնակցել այս գործընթացին);
- Սակրեբուլեյի անդամների և խմբակցությունների անդամների կողմից նախատեսված հանդիպումներում և նրանց նույնպես տրամադրեք տեղեկատվություն ձեր կարիքների մասին (այդ հանդիպումների նախաձեռնողը կարող եք լինել դուք);
- Առաջնահերթությունների փաստաթղթի առաջնային տարբերակի հանրային քննարկմանը;
- Մասնակցային բյուջետավորման գործընթացում (գրել նախաձեռնություն, մասնակցել քվեարկության գործընթացին):

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Քո գաղափարը Բաթումիին» մասնակցային բյուջետավորման նախագծի շրջանակներում, մինչև 2020 թվականի գաղափարների մրցույթը, Բաթումիի հեծանվային ակումբը (Love to Ride Batumi) ստեղծել է նախաձեռնող խումբ և պատրաստել գաղափար, որը կոչվում է «Բաթումի հեծանվային քաղաք»: Գաղափարի նպատակն էր քաղաքում տեղադրել հեծանիվների կայանատեղի և վերանորոգման կայաններ: Նշված գաղափարը շահել է քաղաքացիների քվեարկությամբ և ֆինանսավորում ստացել Բաթումիի մունիցիպալիտետի բյուջեից: Ներկայումս Բաթումիի տարածքում արդեն տեղադրվել է հեծանիվների 12 կայանատեղ (ընդհանուր 70 հատ), իսկ նույն տարում կառուցվեց հեծանիվների վերանորոգման 5 կայան: Մասնակցային բյուջետավորման ծրագիրը Բաթումիի քաղաքապետարանը 2019 թվականից իրականացնում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) Ժողովրդավարական կառավարման նախաձեռնության ծրագրի (GGI)-ի աջակցությամբ:

Համագործակցե՛ք.

- Գենդերային հավասարության մունիցիպալ խորհրդի հետ և կիսվեք ձեր համայնքում առկա մարտահրավերներով;
- Քաղաքապետի խորհրդատվական խորհրդի հետ;
- Հաշմանդամություն ունեցող անձանց խորհրդի հետ;
- Տեղական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ և տեղեկացրեք նրանց ձեր կարիքների մասին:

Հատկանշական է, որ քաղաքացին իրավունք ունի դառնալու մունիցիպալիտետում ստեղծված տարբեր խորհրդների անդամ՝ հաշվի առնելով օրենքով սահմանված ընթացակարգերը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

NDI-ի աջակցությամբ հաջողությամբ իրականացվում է նախագիծը, որն ապահովում է առաջնահերթությունների փաստաթղթի և բյուջեի մշակման գործընթացում քաղաքացիների ներգրավվածության լավ փորձի ներդրումը: Այս գործընթացում ակտիվորեն ներգրավված էր տեղական քաղաքացիական սեկտորը: Նրանք հարցում են անցկացրել խոցելի խմբերի կարիքների վերաբերյալ: Բացահայտվել են մի շարք խնդիրներ, որոնք տարբեր հարթակներում ընդգրկվել են տեղական իշխանությունների օրակարգում: Քաղաքապետարանին կներկայացվեն առաջարկություններ և նախաձեռնություններ, որոնց մի մասն արդեն արտացոլվել է 2023 թվականի բյուջեում:

- *Թելավիի բյուջեում հաշվի են առնվել քաղաքացիական խմբերի կողմից ներկայացված երկու նախաձեռնություններ՝ ավելացնելով հաշմանդամների հիգիենայի աջակցության ծրագրի ֆինանսավորումը և աուտիզմի սպեկտրով մեծահասակների (7 տարեկանից բարձր) համաֆինանսավորման ծրագրի ավելացում (քաղաքացիական սեկտորի այս նախաձեռնությունը համահունչ էր Գենդերային խորհրդի կողմից ներկայացված բյուջետային նախաձեռնությանը);*
- *Զուգդիդիի քաղաքացիական սեկտորի կողմից քաղաքապետարանին ներկայացված առաջարկությունների թվում էր նաև մունիցիպալիտետում ճանապարհային ենթակառուցվածքների հարմարեցումը: Բյուջեում հաշվի է առնվել Զուգդիդի քաղաքի կենտրոնական փողոցների ձայնային լուսացույցների տեղադրումը:*

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քաղաքացիական ակտիվության արդյունքում Նինոծմինդայի մունիցիպալիտետում բնակվող բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները 2023 թվականից տեղական բյուջեից կստանան ֆինանսական աջակցություն (կրթաթոշակ): Ամեն ինչ սկսվեց երիտասարդների և տեղական ոչ կառավարական կազմակերպության համագործակցությամբ: NDI-ի աջակցությամբ Սամցխե-Ջավախեթիի մեդիա կենտրոնն իրականացրել է «Մասնակցային բյուջետավորում՝ հանուն քաղաքացիների շահերի պաշտպանության» նախագիծը: Կրթաթոշակների հարցը բացահայտվել է երիտասարդների կարիքների ուսումնասիրության արդյունքում, որին հաջորդել է երիտասարդների կողմից ակտիվ քարոզչական արշավը: Ի վերջո, քաղաքապետարանը հաշվի է առել երիտասարդների կարիքները և 2023 թվականի բյուջեում ավելացրել է Նինոծմինդայի առաջադեմ ուսանողների համար ֆինանսական աջակցության (կրթաթոշակային) ծրագիր:

! **Հիշե՛ք. Լավ կլինի, գալիք տարվա բյուջեի առաջնահերթությունների վերաբերյալ ձեր տեսակետները գործադիրին ներկայացնել մինչև օգոստոսի 1-ը, քանի որ է միջնաժամկետային առաջնահերթությունների փաստաթղթի նախնական տարբերակը պատրաստ է մինչեւ օգոստոսի 15-ը;**

Ակնհայտ է, որ ֆինանսական փաստաթղթի վրա աշխատելու գործընթացը շարունակվում է, և դուք ցանկացած պահի կարող եք շփվել գործադիր և ներկայացուցչական մարմինների հետ ձեր կարիքների վերաբերյալ՝ և՛ բյուջեի պատրաստման, և՛ վերանայման փուլում:

» Առաջնահերթությունների փաստաթղթի նախնական տարբերակը պատրաստելուց հետո մասնակցել հանրային քննարկմանը, եթե դա նախատեսված է;

» Պատասխան խնդրել քաղաքապետարանից, թե արդյոք առաջին տարբերակում ձեր կարիքը հաշվի է առնվել և ևս մեկ անգամ նշել, որ դա պետք է հաշվի առնել բյուջեի մշակման գործընթացում;

Մասնակցք մունիցիպալիտետի մարմինների կողմից մինչև նոյեմբերի 15-ը նախատեսված հանդիպումներին և օգտագործել բոլոր հարթակները ձեր խնդիրը պաշտպանելու համար:

ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

NDI-ի տեղական ինքնակառավարման ծրագիրը համագործակցում է Օզուրգեթիի, Չոխատաուրիի, Լանչխութիի, Զուգդիդիի, Փոթիի, Ծալենջիխիի, Թելավիի, Ախմետայի, Լագոդեխիի և Մառնեուլիի մունիցիպալիտետների հետ: Այս մունիցիպալիտետներում հաջողությամբ ներդրվել է առաջնահերթությունների փաստաթղթի առաջին տարբերակի վերանայման փորձը: Մինչև օգոստոսի 15-ը առաջնահերթությունների փաստաթուղթը պատրաստ լինելուց և սակրեբուլոյի խմբակցությունները, Գենդերային հավասարության խորհուրդը և հասարակական կազմակերպությունները քաղաքապետարանին իրենց նախաձեռնությունները ներկայացնելուց հետո տեղի է ունենում հանրային քննարկում: Քաղաքապետարանի ֆինանսական ծառայության պետի ներկայացումից հետո հանդիպման մասնակից բոլոր սուբյեկտները հնարավորություն ունեն ներկայացնելու իրենց նախաձեռնությունը, անցկացվում է քննարկում, թե որ նախաձեռնությունը կարող է հաշվի առնվել բյուջեում: Այս գործընթացի հիմնական արդյունքն այն է, որ ներդրվեց բյուջետային գործընթացում ներգրավվածության մեխանիզմ, բյուջետային հարցերի շուրջ քաղաքապետարանի և շահագրգիռ կողմերի ակտիվ համակարգումը սկսվեց վաղ փուլում, և այս գործընթացը օգնեց արտացոլել խմբակցությունների, Գենդերային խորհրդի և ոչ կառավարական կազմակերպությունների մի շարք նախաձեռնություններ մունիցիպալ բյուջեներում:

ԴՈՒՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐՆ ԵՔ:

Յուրաքանչյուր քաղաքացու և տարբեր խմբերի գործունեությունը միշտ արդյունք է տալիս՝ երբեմն անմիջապես, երբեմն էլ՝ երկար ու հետևողական քարոզչության արդյունքում:

Ձեր՝ որպես քաղաքացի ներգրավվածությունը բյուջետային գործընթացում չի նշանակում, որ բոլոր հարցերը անպայման լուծում կստանան: Հնարավոր է, որ առաջին փորձն էլ արդյունք չտա, քանի որ մունիցիպալիտետը սահմանափակ ֆինանսական միջոցներ ունի, և բոլոր խնդիրները հնարավոր չէ լուծել մեկ տարում: Այնուամենայնիվ, միշտ կգա մի պահ, երբ ձեր հարցը կդառնա առաջնահերթություն, գլխավորը չհրաժարվեք սկսված գործից այն պատճառով, որ «միևնույն է ոչինչ չի ստացվի»:

Տեղի քաղաքացիների մի քանի տարի առաջ սկսած գործունեությունը 2022 թվականին ցանկալի արդյունքով ավարտվեց Կվարելիի մունիցիպալիտետի Ձինոբիանի գյուղում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Կվարելիի մունիցիպալիտետի Ջինոբիանի գյուղում ապրում է կովկասյան Ալբանիայի վերջին մնացած էթնիկ խումբը՝ ուդիները, որոնք 100 տարի առաջ՝ 1922 թվականին, վերաբնակեցվել են Վրաստանում՝ Ադրբեջանի տարածքից: Տեղի երիտասարդների տարբեր միջոցառումներից և գյուղի պատմությունը քարոզելու արշավից հետո Ջինոբիանին դարձել է մունիցիպալիտետի նոր զբոսաշրջային գրավչություն: Տարիների ընթացքում գյուղի հիմնական մարտահրավերը եղել է վատ ճանապարհային ենթակառուցվածքները և հանրային տարածքների բացակայությունը: Երիտասարդական նախաձեռնող խումբը տարիներ շարունակ բնակիչների ստորագրություններով հաստատված նամակներով խնդրում էր քաղաքապետարանին լուծել այս խնդիրները, սակայն քաղաքապետարանի փոքր բյուջեով հնարավոր չեղավ լուծել նշված խնդիրները: Եվրոպական միության ֆինանսավորմամբ Կախեթիում սկսվեցին փորձնական ենթակառուցվածքային նախագծերի իրականացումը զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող վայրերում, պայմաններից մեկի համաձայն՝ նախաձեռնությունը պետք է լիներ տեղի համայնքից: Ֆինանսական այս աղբյուրը Ջինոբիանի համար խնդիրը լուծելու հնարավորություն էր: Նախաձեռնող խումբը կրկին կարողացավ մոբիլիզացնել գյուղի բնակչությանը, գրվեց նամակ, որտեղ նշված էր նախագծի իրականացման անհրաժեշտությունն ու ժամանակը գյուղի զբոսաշրջային ներուժի զարգացման համար: Քաղաքապետարանի և գյուղի նախաձեռնող խմբի համագործակցությունը վերջապես արդյունք տվեց՝ նախագիծը ֆինանսավորվեց 1 մլն. լարիով և այսօր Ջինոբիանին արդեն ունի ասֆալտապատված ներքին ճանապարհներ, գրադարան, հանգստի գոտի և Ուդիների թանգարան:

Մունիցիպալիտետի բյուջեի սահմանափակ միջոցների ճիշտ բաշխման գործում վճռորոշ նշանակություն ունի քաղաքացիների մասնակցությունը: Եթե հետևողական լինեք, չթողնեք սկսած գործը և անընդհատ հիշեցնեք կառավարությանը կարիքների մասին, ապա ավելի մեծ հավանականություն կա, որ ձեր հարցը կհայտնվի բյուջեի առաջնահերթությունների շարքում:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ՝ **ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ**

ՍԱ ԿԱՐԵՎՈՐ Է.

- Քաղաքապետը մինչև նոյեմբերի 15-ը բյուջեի նախագծի առաջին տարբերակը ներկայացնում է Սակրեբուլոյին;
- Սակրեբուլոյի գրասենյակը բյուջեի նախագիծը պետք է հրապարակի հանրային քննարկման՝ այն ներկայացնելուց հետո 5-օրյա ժամկետում;
- Սակրեբուլոյի գրասենյակը պետք է հրապարակի ծանուցում, որում նշված կլինեն՝ Սակրեբուլոյի այն հանձնաժողովները, որոնց ներկայացվել են քննարկման նախագծերը, հանձնաժողովներում և խմբակցություններում նախագծի քննարկման ժամկետները, հանձնաժողովների և խմբակցությունների գտնվելու վայրը և նիստերի ժամանակացույցը, նախագծերը Սակրեբուլոյի նիստ բերելու ժամանակը, Սակրեբուլոյի գրասենյակի հասցեն, որտեղ կարելի է կարծիքներ ներկայացնել նախագծի հետ կապված, կարծիքների ներկայացման վերջնաժամկետի վերաբերյալ;
- Սակրեբուլոյի հանձնաժողովներում սկսվում է բյուջեի նախագծի քննարկումը;
- Ցանկացած անձ իրավունք ունի առանց նախնական թույլտվության մասնակցել Սակրեբուլոյի, սակրեբուլոյի հանձնաժողովի, սակրեբուլոյի ժամանակավոր աշխատանքային խմբի դռնբաց նիստերին;
- Սակրեբուլոյի, սակրեբուլոյի հանձնաժողովի, սակրեբուլոյի ժամանակավոր աշխատանքային խմբի նիստին ներկա անձը, առանց նախնական թույլտվության, բայց միայն նիստի նախագահի համաձայնությամբ, իրավունք ունի հարցեր ուղղել խոսնակին և համախոսնակին, տալով՝ բացատրություն, հայտարարություն, տեղեկատվություն կամ ուղղություն;
- Մունիցիպալիտետի Սակրեբուլոյի պայմանագրով, որպես կանոն, նախատեսված է նաև շահագրգիռ անձանց (գրանցված ընտրողների, հասարակական, քաղաքական կազմակերպությունների, իրավաբանական և քաղաքացիական խմբերի ներկայացուցիչների) որպես խոսնակ կամ համախոսնակ ներկայանալ և մասնակցություն ունենալ բանավեճերին: Այս իրավունքից օգտվելու համար շահագրգիռ անձը պարտավոր է նիստից առնվազն 2 օր առաջ գրավոր դիմել Սակրեբուլոյի գրասենյակ;

- Սակրեբուլոն մինչև նոյեմբերի 25-ը նախապատրաստում է առաջարկություններ բյուջեի նախագծի վերաբերյալ;
- Սակրեբուլոն պետք է ապահովի բյուջեի նախագծի հանրային քննարկումը: Օրենսդրությունը և Սակրեբուլոյի կանոնակարգը չեն սահմանում հանրային քննարկման ժամկետը, սակայն կարևոր է, որ շահագրգիռ կողմերի հետ բյուջեի նախագծի քննարկմանը ներկա գտնվեն այն ժամանակահատվածում, երբ Սակրեբուլոն աշխատում է բյուջեի նախագծի նկատողությունների վրա, որպեսզի հանրային քննարկման ժամանակ արտահայտված նկատողությունները արտացոլվեն նաև քաղաքապետին ներկայացվելիք առաջարկություններում;
- Բյուջեի նախագծի վերաբերյալ նկատողությունների առկայության դեպքում Սակրեբուլոյի նախագահը ոչ ուշ, քան նոյեմբերի 25-ը, բյուջեի նախագիծը բոլոր նկատողություններով վերադարձնում է մունիցիպալիտետի քաղաքապետին;
- Քաղաքապետը բյուջեի նախագծի նույն կամ ուղղված տարբերակը՝ Սակրեբուլոյի նկատողությունների վերաբերյալ եզրակացության հետ միասին (որում նշվում է յուրաքանչյուր նկատողություն և այս նկատողությունն ընդունելու կամ մերժելու հիմնավորումը) ներկայացվում է Սակրեբուլոյին ոչ ուշ, քան դեկտեմբերի 10-ը;
- Բյուջեի նախագծի վերաբերյալ արված նկատողությունների վերաբերյալ քաղաքապետի եզրակացությունը և բյուջեի ուղղված տարբերակի (փոփոխության դեպքում) Սակրեբուլոյի աշխատակազմը հրապարակում է քաղաքապետի կողմից այն ներկայացնելուց հետո՝ երկօրյա ժամկետում;
- Սակրեբուոյի կողմից նկատողությունների բացակայության դեպքում բյուջեի նախագծի քննարկումը Սակրեբուլոյի նիստում սկսվում է բյուջեի նախագծի հրապարակումից ոչ շուտ, քան երկու շաբաթ հետո;
- Բյուջեի նախագծի երկրորդ ներկայացումից հետո Սակրեբուլոյում սկսվում է բյուջեի նախագծի քննարկումը (հրապարակումից ոչ շուտ, քան մեկ շաբաթ հետո);
- Սակրեբուլոն, մինչև նոր բյուջետային տարվա սկիզբը, իր անդամների մեծամասնությամբ հաստատում է մունիցիպալիտետի բյուջեի նախագիծը;
- Տարեկան բյուջեն հրապարակվում է և հասանելի է հանրությանը:

ԴՈՒՔ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻ՝ Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՆԵԼ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ:

- Ծանոթացեք Սակրեբուլոյի կողմից հրապարակված բյուջեի նախագծին կից փաստաթղթերի հետ միասին;
- Մինչև նոյեմբերի 25-ը գրավոր ներկայացրեք ձեր կարծիքը Սակրեբուլոյին, որպեսզի Սակրեբուլոն կարողանա ձեր հարցը արտացոլել քաղաքապետին ներկայացվելիք առաջարկություններում;
- Ծանոթացեք Սակրեբուլոյի հանձնաժողովների ժամանակացույցին և մասնակցեք հանձնաժողովի նիստերին;
- Հանձնաժողովի նիստում կարող եք հարց տալ և հայտարարություն անել առանց նախնական թույլտվության, բայց միայն նիստի նախագահի համաձայնությամբ;
- Իմացեք, թե երբ է նախատեսվում բյուջեի նախագծի հանրային քննարկումը և անպայման ներկա գտնվեք;
- Գնացեք հանրային քննարկումներին՝ պատրաստ լինելով հանրությանը համոզելու, որ ձեր խնդիրն առաջնահերթություն է;
- Հանդիպման ղեկավարի համաձայնությամբ խնդրեք ելույթ ունենալ բյուջեի նախագծի հանրային քննարկմանը և ևս մեկ անգամ հիշեցրեք կառավարությանը ձեր հարցի մասին;
- Ծանոթացեք քաղաքապետարանի պատրաստած բյուջեի նախագծի երկրորդական տարբերակին; Այս փաստաթուղթը նույնպես պետք է հրապարակվի նաև մունիցիպալիտետի պաշտոնական կայքում;
- Եթե տեսնում եք, որ ձեզ համար առաջնահերթ խնդիրը ներառված չէ բյուջեի նախագծում, ապա եւս մեկ անգամ գրություն ուղարկեք քաղաքապետարան, որտեղ հիմնավորում եք ձեր կարիքը;
- Պարզեք, թե Սակրեբուլոյի նիստում երբ է նախատեսվում բյուջեի նախագծի քննարկումը;
- Մասնակցեք Սակրեբուլոյի նիստում բյուջեի նախագծի քննարկմանը;
- Սակրեբուլոյի նիստում կարող եք հարց տալ և հայտարարություն անել առանց նախնական թույլտվության, բայց միայն Սակրեբուլոյի նիստի նախագահի հաստատմամբ:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ՝ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ՝ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՍԱ ԿԱՐԵՎՈՐ Է.

- Բյուջեի ծախսերը սկսվում են բյուջետային տարվա հունվարի 1-ից;
- Բյուջեի կատարման համար պատասխանատու է Գործադիր մարմինը;
- Բյուջեն տարվա ընթացքում կարող է մի քանի անգամ փոփոխվել, որը հաստատում է Սակրեբուլոն;
- Քաղաքապետարանը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մեկամսյա ժամկետում կազմում է կատարման եռամսյա հաշվետվություն և ուղարկում Սակրեբուլո;
- Բյուջեի ծախսերի թափանցիկության համար կարևոր է եռամսյակային հաշվետվությունների հրապարակումը;
- Բյուջետային տարվա ավարտից հետո 2 ամսվա ընթացքում քաղաքապետարանը պետք է պատրաստի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և մինչև մարտի 1-ը ներկայացնի Սակրեբուլոյին;
- Բյուջեի կատարման հաշվետվությունը պետք է հրապարակվի մունիցիպալիտետի Սակրեբուլոյին ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում;
- Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին տեղեկատվությունը հանրությանը պետք է տրամադրվի հանրային քննարկման ձևաչափով;
- Սակրեբուլոն պետք է վերանայի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և հաստատի կամ չհաստատի այն (եթե կատարման հաշվետվությունը չի հաստատվում, դա ոչինչ չի փոխում, օրենքը որևէ մեկի պատասխանատվության հարց չի դնում):

ԴՈՒՔ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻ՝ Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՆԵԼ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ:

- Ծանոթացեք հաստատված բյուջեի և առաջնահերթությունների փաստաթղթին;
- Ծանոթացեք տեղեկություններին, թե երբ է նախատեսվում բյուջեի փոփոխության քննարկումը Սակրեբուլոյում և մասնակցեք նիստին;
- Եթե ձեր հարցը բյուջեում ներառված չի եղել, կարող եք բազմիցս դիմել տեղական իշխանություններին և խնդրել լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայության դեպքում հարցը հաշվի այս առնել;
- Ծանոթացեք բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվություններին;
- Պարզեք, թե երբ է նախատեսված բյուջեի տարեկան հաշվետվության հանրային քննարկումը և ներկա գտնվեք;
- Մասնակցեք Սակրեբուլոյի նիստում տարեկան բյուջեի հաշվետվության քննարկմանը:

Ի՞ՆՉ ԱՐԴՅՈՒՆՔ ՈՒՆԻ ՁԵՐ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՄԱՆ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

- Կմեծանա տեղական իշխանությունների պատասխանատվությունը;
- Կբարձրանա քաղաքացիների նկատմամբ հաշվետվողականությունը;
- Կապահովվի բյուջեի թափանցիկությունը;
- կբարձրանա քաղաքացիական վերահսկողությունը;
- Ձեր բացասական կամ դրական կարծիքը բյուջեի կատարման վերաբերյալ հաշվի կառնվի ընթացիկ և հաջորդ տարվա բյուջեի պլանավորման և կատարման ընթացքում.;
- Հանրության մասնակցությունը, դրանից ստացված արձագանքների հիման վրա, ապահովում է հարկաբյուջետային քաղաքականության որոշումների վերանայում:

Ձեր ներգրավվածությունը բյուջետային գործընթացում մեծացնում է կառավարության հաշվետվողականությունը, ապահովում բյուջեի թափանցիկությունը և նպաստում պետական միջոցների արդյունավետ ծախսմանը:

ԲՅՈՒՋԵԻ ՕՐԱՑՈՒՅՑ

	ԸՆԹԱՑՔ	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԲՅՈՒՋԵԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ	Մարտի 1	Առաջնահերթությունների փաստաթղթի վրա աշխատանքի սկիզբ
	Մարտի 1	Մունիցիպալ ծառայությունների համակարգման նպատակով աշխատանքային խմբի ստեղծում
	Հուլիսի 15	Ֆինանսների նախարարության կողմից ծրագրվելիք բյուջետային տարվա հիմնական բյուջետային պարամետրերի տրամադրում
	Հուլիսի 15-ից	Ֆինանսական մարմինը հաշվարկում է բյուջեի մուտքի և վճարումների կանխատեսվող ցուցանիշները և սկսում է տեղական ինքնակառավարման միավորի բյուջեի նախագծի կազմման համապատասխան ընթացակարգերը
	Մինչև օգոստոսի 15-ը	Աշխատանքային խումբը պատրաստում է առաջնահերթությունների փաստաթղթի առաջին տարբերակը, որը հավանում է մունիցիպալիտետի քաղաքապետը
	Սեպտեմբերի 15-ից ոչ ուշ	Մունիցիպալ ծառայությունները, իրենց ծառայողական գործունեությանը համապատասխան, կազմում են հաջորդ տարվա բյուջեն և ներկայացնում ֆինանսական ծառայության քննարկմանը
	Հոկտեմբերի 1-ից ոչ ուշ	Մունիցիպալիտետի ֆինանսական ծառայությունը բյուջեի նախագծի նախնական տարբերակը ներկայացնում է քաղաքապետի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի քննարկմանը
	Հոկտեմբերի 5-ից ոչ ուշ	Վրաստանի ֆինանսների նախարարությունը տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկացնում է նպատակային փոխանցման կանխատեսվող պարամետրերի և փոխանցվելիք ֆինանսական օգնության և հարկերից ստացվելիք եկամուտների կանխատեսման ցուցանիշների մասին

	ԸՆԹԱՑՔ	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ	Նոյեմբերի 15-ից ոչ ուշ	Բյուջեի նախագիծը և առաջնահերթությունների փաստաթուղթը քաղաքապետը ներկայացնում է Սակրեբուլային
	Նոյեմբերի 20-ին	Բյուջեի նախագիծը հրապարակվում է հանրային քննարկման՝ բյուջեի նախագիծը Սակրեբուլե ներկայացնելուց հետո 5-օրյա ժամկետում
	Նոյեմբերի 25-ից ոչ ուշ	Նկատողությունների դեպքում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի նախագահը բյուջեի նախագիծը նկատողություններով վերադարձնում է քաղաքապետին
	Դեկտեմբերի 10-ից ոչ ուշ	Բյուջեի նախագծի և առաջնահերթությունների փաստաթղթի նույն կամ ուղղված տարբերակները քաղաքապետը ներկայացնում է ներկայացուցչական մարմնին (սակրեբուլային)
	Մինչև Դեկտեմբերի 31-ը	Մինչև նոր բյուջետային տարվա սկիզբը տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը հրապարակայնորեն վերանայում է և որոշում կայացնում բյուջեի նախագիծը հաստատելու մասին: Բյուջեի նախագծին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է ներկայացուցչական մարմնի ցուցակի մեծամասնությամբ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ/ ԴՈՒՅԹՈՒՏԵՎՇՄ	Ամեն ամսվա մինչև 10-ը (Փետրվար, մարտ, ապրիլ...)	Ֆինանսական ծառայությունը յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 10-օրյա ժամկետում կազմում է 2018 թվականի հաշվետվությունը, որտեղ ներկայացվում են տեղական ինքնակառավարման միավորի բյուջեի մուտքերի, հարկերի, մնացորդի փոփոխությունների և ամբողջական հաշվեկշռի ցուցանիշով
	Ապրիլի 30, հուլիսի 31, հոկտեմբերի 31	Ֆինանսական ծառայությունը յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 10-օրյա ժամկետում կազմում է 2018 թվականի հաշվետվությունը, որտեղ ներկայացվում են տեղական ինքնակառավարման միավորի բյուջեի մուտքերի, հարկերի, մնացորդի փոփոխությունների և ամբողջական հաշվեկշռի ցուցանիշով
	Մարտի 28	Ֆինանսական ծառայությունը բյուջետային տարվա ավարտից ոչ ուշ, քան 2 ամիս հետո կազմում է տարվա բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններ և ներկայացնում Սակրեբուլային
	Մայիսի 1	Սակրեբուլոն ոչ ուշ, քան մայիսի 1-ը նայում է բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և որոշում կայացնում տարեկան հաշվետվությունները հաստատելու կամ չհաստատելու մասին:

Ք. Թբիլիսի, Բեսիկի փող. No4
+995 32 293 58 30
ndigeorgia@ndi.org
www.ndi.org

ndigeorgia@ndi.org
www.ndi.org